# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք,
գ. Լեռնապատ, 27 փողոց. 7/6 , Հեռ. հեռախոս
/032268781/ , Lernapat.Lori@mta.gov.am

N 55
*02 մարտ 2018թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն մարզպետ.

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 33 հոդվածի 9-րդ կետով՝ Ձեզ ենք ներկայացնում Լեռնապատ համայնքի ղեկավարի N 5-Ա, N 6-Ա, N 7-Ա, N8-Ա և N9-Ա որոշումները:

02/03/2018

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Հ. Վարդանյան*
*032268781*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռ. (0322)6-87-81, Lernapat.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

23 հունվարի 2018 թվականի թիվ 05-Ա

## ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 06-041-0007-0002 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 24 կետերով և ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշման 48 կետով`

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ`

Լեռնապատ համայնքի, կադաստրային քարտեզի 06-041-0007-0002 ծածկագրի տակ գտնվող Շուրիկ Հրանտի Դալլաքյանին, Վալյա Մարտիրոսի Հակոբյանին, Կարապետ Շուրիկի Դալլաքյանին, Հասմիկ Սերգեյի Գյոզալյանին, Ինգա Կարապետի Դալլաքյանին, Էրիկ Կարապետի Դալլաքյանին սեփականաշնորհած 0,0703 հա տնամերձ հողին տրամադրել փոստային հասցե` գ Լեռնապատ 31 փողոց 2 տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ՄԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

2018թ. հունվարի 23
գ. Լեռնապատ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
գ.Լեռնապատ, հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 06-Ա

## ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱԽՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով և առաջնորդվելով Լեռնապատ համայնքի, ավագանու 2018թ.-ի փետրվարի 05 թիվ 02-Ն <<Լեռնապատ համայնքի ավագանու 2017թ դեկտեմբերի 14-ի <<Լեռնապատ համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին>> որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> որոշմամբ՝

որոշում եմ.

1. Հաստատել Լեռնապատ համայնքի 2018թ.-ի բյուջեն՝ եկամտային և ելքային մասերի բախշումը ըստ եռամսյակների:

2. Հաստատել համայնքի ենթակայության բյուջետային հիմնարկների 2018թ.-ի ծախսերի նախահաշիվները՝ ըստ գործառնական և տնտեսական դասակարգման հոդվածների:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

2018թ. փետրվարի 05
գ.Լեռնապատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռ. (0322)6-87-81, Lernapat.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

19 փետրվարի 2018 թվականի թիվ 7-Ա

06-041-0007-0002 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Շուրիկ Դալլաքյանի դիմումը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տեղանքի չափագրման արդյունքում կազմված հատակագիծը և բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 60 և 64-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7-րդ հոդվածով, 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-041-0007-0002 ծածկագրի տակ գտնվող 0,07033 հա բնակելի կառուցապատման և սպասարկման հողամասի նկատմամբ Շուրիկ Հրանտի Դալլաքյանի(ծնվ. 1952թ.), Վալյա Մարտիրոսի Հակոբյանի(ծնվ. 1954թ.), Կարապետ Շուրիկի Դալլաքյանի(ծնվ. 1983թ.), և Աննա Շուրիկի Դալլաքյանի(ծնվ. 1975թ.), Գայանե Շուրիկի Դալլաքյանի(ծնվ. 1976թ.), Ժաննա Շուրիկի Դալլաքյանի(ծնվ. 1979թ.) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:
2. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
3. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասից հատկացված մակերեսն անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել, իսկ հատկացվածից ավել զբաղեցված հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Շուրիկ Հրանտի Դալլաքյանի(ծնվ. 1952թ.), Վալյա Մարտիրոսի Հակոբյանի(ծնվ. 1954թ.), Կարապետ Շուրիկի Դալլաքյանի(ծնվ. 1983թ.), և Աննա Շուրիկի Դալլաքյանի(ծնվ. 1975թ.), Գայանե Շուրիկի Դալլաքյանի(ծնվ. 1976թ.), Ժաննա Շուրիկի Դալլաքյանի(ծնվ. 1979թ.) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:
4. Հողամասի սահմանները որոշվում են համաձայն հաստատված հատակագծի:
5. Հողամասում առկա բնակելի տնից 74,25 քմ մակերեսով մասի նկատմամբ ճանաչել սույն որոշման 1-ին կետում նշված անձանց սեփականության իրավունքը, համաձայն քաղաքաշինական փաստաթղթերի, իսկ 88,51 քմ մակերեսով բնակելի տան մաս և 22,62 քմ մակերեսով զոմը ճանաչել որպես ինքնակամ կառույցներ:
6. Ուժը կորցրած ճանաչել նախորդ դիմումով ներկայացված քաղվածքը և որոշումը:
7. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե 31 փողոց 2 տուն:
8. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

2017թ. փետրվարի 19

գ. Լեռնապատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռ. (0322)6-87-81, Lernapat.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

21 փետրվարի 2018 թվականի թիվ 8 - Ա

06-041-0008-0008 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնապատի բնակիչ Ռուզվելտ Եգորյանի դիմումը, «Գ. Վեքիլյան» ԱՁ-ի կողմից՝ տեղանքի չափագրման արդյունքում կազմված հատակագիծը և բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 60 և 64-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7-րդ հոդվածով, 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-041-0008-0008 ծածկագրի տակ գտնվող 0,06302 հա բնակելի կառուցապատման և սպասարկման հողամասի նկատմամբ Ռուզվելտ Սերգեյի Եգորյանի(ծնվ. 1948թ.), Անահիտ Խաչիկի Գյոզալյանի(ծնվ. 1954թ.), Աշոտ Ռուզվելտի Եգորյանի(ծնվ. 1980թ.) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:
2. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական կամ հողաշինարարական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
3. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասից 0,06 հա մակերեսն անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել, իսկ հատկացվածից ավել զբաղեցված 0.00302 հա հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Ռուզվելտ Սերգեյի Եգորյանի(ծնվ. 1948թ.), Անահիտ Խաչիկի Գյոզալյանի(ծնվ. 1954թ.), Աշոտ Ռուզվելտի Եգորյանի(ծնվ. 1980թ.) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:
4. Հողամասում առկա բնակելի տնից 94,42 քմ մակերեսով մասի և 25,65 քմ մառանի(կառուցված 1992թ.) նկատմամբ ճանաչել սույն որոշման 1-ին կետում նշված անձանց սեփականության իրավունքը, իսկ 2002-2008թթ. կառուցված 65,40 քմ մակերեսով բնակելի տան մասը և 12,53 քմ մակերեսով գոմը ճանաչել որպես ինքնակամ կառույցներ:
5. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ 32 փողոց 14 տուն:
6. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

2018թ. փետրվարի 21
գ. Լեռնապատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռ. (0322)6-87-81, Lernapat.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 փետրվարի 2018 թվականի թիվ 9-Ա

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՄԱՍԻ ԵՎ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Շուրիկ Դալլաքյանի դիմումը, Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը N23022018-0030, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված հատակագծերը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի մասերով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով,«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Լեռնապատ համայնքի 31-րդ փողոց թիվ 2 փոստային հասցեում գտնվող և Շուրիկ Հրանտի Դալլաքյանին, Վալյա Մարտիրոսի Հակոբյանին, Կարապետ Շուրիկի Դալլաքյանին, Աննա Շուրիկի Դալլաքյանին, Գայանե Շուրիկի Դալլաքյանին և Ժաննա Շուրիկի Դալլաքյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողամասի վրա կառուցված , այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող , առանց քաղաքացիական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը , կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման, անվտանգության գոտիներում նարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, բնակելի տանը կից կառուցված 88,51քմ մակերեսով բնակելի տան մասի և 22,62քմ մակերեսով անասնագոմի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Շուրիկ Հրանտի Դալլաքյանի(ծնվ. 1952թ.), Վալյա Մարտիրոսի Հակոբյանի(ծնվ. 1954թ.), Կարապետ Շուրիկի Դալլաքյանի(ծնվ. 1983թ.), և Աննա Շուրիկի Դալլաքյանի(ծնվ. 1975թ.), Գայանե Շուրիկի Դալլաքյանի(ծնվ. 1976թ.), Ժաննա Շուրիկի Դալլաքյանի(ծնվ. 1979թ.) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:
2. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները բնակելի տան համար 38945 /երեսունութ հազ ինը հարյուր քառասունհինգ/ ՀՀ դրամ, իսկ անասնաշենքի համար 5972 /հինգ հազար ինը հարյուր յոթանասուներկու/ ՀՀ դրամ, 30-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

2017թ. փետրվարի 21
գ. Լեռնապատ